

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՏԱՎՈՒՇ

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

**1** Բնութագրումով որոշել պետությունը.

Այս երկրի ավերը ողողում են Խաղաղ օվկիանոսի արևմտյան ծովերի ջրերը, տարածքով այն Ասիայի ամենամեծ երկիրն է, իսկ աշխարհում գրավում է երրորդ տեղը:Տարածքը կազմում է 9.6 մլն կմ ²:

- 1) Հնդկաստան
- 2) Ռուսաստան
- 3) Ղազախստան
- 4) Չինաստան

**2** Տրվածներից ո՞ր մշակաբույսի պահանջն է ճապոնիան ամբողջությամբ լրացնում իր գյուղատնտեսության շնորհիվ:

- 1) բրինձ
- 2) արմավ
- 3) շաքարակիրներ
- 4) թեյ

**3** Օովի մակարդակի համեմատ, իր միջին բարձրությամբ Աֆրիկան զիջում է միայն.

- 1) Ավստրալիային և Հվ.Ամերիկային
- 2) Հս Ամերիկային և Եվրասիային
- 3) Հս. Ամերիկային և Հվ. Ամերիկային
- 4) Անտարկտիդային և Եվրասիային

**4** Վաղիները չոր գետահուններ են, որոնք հանդիպում են.

- 1) Եվրասիայում
- 2) Ավստրալիայում
- 3) Աֆրիկայում
- 4) Անտարկտիդայում

**5** Տրված լեռնային համակարգերից ո՞րը չի գտնվում Ասիայում:

- 1) Հինդիկուշի
- 2) Տիբեթի
- 3) Ատլասի
- 4) Կարակորումի

6

Պետություն-մայրաքաղաք զույգերից ո՞րը Հարավային Եվրոպայում չէ:

- 1) Հունաստան – Աթենք
- 2) Իտալիա – Հռոմ
- 3) Ֆրանսիա – Փարիզ
- 4) Իսպանիա – Մադրիդ

7

Տրվածներից ո՞ր երկիրը չունի 100 միլիոնից ավել բնակչություն:

- 1) Ինդոնեզիա
- 2) Բանգլադեշ
- 3) Իսրայել
- 4) Պակիստան

8

Նշվածներից ո՞ր երկրի տարածքով է հոսում Դանուբ գետը:

- 1) Իսպանիա
- 2) Իտալիա
- 3) Գերմանիա
- 4) Ֆրանսիա

9

Տրված երևույթներից որում է խախտված պատճառ-անմիջական հետևանք կապը:

- 1) Մշտական քամիներ – օվկիանոսային հոսանքներ
- 2) Գրավիտացիա – մակընթացություն և տեղատվություն
- 3) Տեկտոնական սալերի տեղաշարժ – կլիմայի գլոբալ փոփոխություն
- 4) Ստորջրյա երկրաշարժ – ցունամի

10

Ներքնուորտի ստորին շերտի ֆիզիկական վիճակը տվյալ պահին, որոշակի տարածքի վրա, կոչվում է.

- 1) եղանակ
- 2) կլիմագրամ
- 3) քամիների վարդ
- 4) կլիմա

11

Բնական զոնա – հողային տիպ – բուսական աշխարհի բնության բաղադրիչների զուգորդումներից որում կա սխալ:

- 1) Տայգա – պողզոլային հողեր – փշատերև ծառեր
- 2) Սավանաներ – կարմրահողեր – բաոբաբ
- 3) Անապատներ – կարմրադեղնավուն հողեր – ֆիկուսներ
- 4) Տունդրա – տորֆաճահճային հողեր – մամուռներ

12

Ո՞ր լեռներն են հանդիսանում բնական սահման Ֆրանսիայի և Իսպանիայի միջև:

- 1) Պիրենեյան
- 2) Ատլասի
- 3) Շվարցվալդի
- 4) Ալպեր

13

Նշվածներից ո՞րը տարածքի մեծությամբ գերիտոշոր երկրների խմբի մեջ չի մտնում:

- 1) Չինաստան
- 2) Կանադա
- 3) Հնդկաստան
- 4) Ավստրալիա

14

Նշվածներից ո՞րն է բացարձակ միապետություն:

- 1) Նիդեռլանդներ
- 2) Նորվեգիա
- 3) Մեծ Բրիտանիա
- 4) Օման

15

Նշվածներից ո՞րն է ունիտար երկիր՝ վարչատարածքային կառուցվածքով:

- 1) Հնդկաստան
- 2) Գերմանիա
- 3) Ֆրանսիա
- 4) Կանադա

16

Ինչպե՞ս է կոչվում որևէ փոքր տարածքի մանրամասն պատկերը հարթության վրա՝ որոշակի մասշտաբով և պայմանական նշաններով:

- 1) մասշտաբ
- 2) ազիմուտ
- 3) հատակագիծ
- 4) քարտեզ

17

**Քարտեզների վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

- 1) Քարտեզները ընդգրկելով մեծ տարածքներ, պարունակում են շատ մանրամասներ:
- 2) Գունոը հարթության վրա պատկերելիս չեն առաջանում աղավաղումներ և ստացվում են գերճշգրիտ քարտեզներ:
- 3) Ընդհանուր աշխարհագրական քարտեզների վրա պատկերվում են միայն բնական բաղադրիչները:
- 4) Որքան փոքր է մասշտաբի հայտարարը, այնքան խոշորամասշտաբ է քարտեզը:

18

**Նշվածներից ո՞րը եղանակաստեղծ տարր չի համարվում:**

- 1) մթնոլորտի խոնավությունը
- 2) մթնոլորտի ջերմաստիճանը
- 3) մթնոլորտի թափանցիկությունը
- 4) մթնոլորտի ճնշումը

19

**Տրվածներից ո՞րը չի համարվում բնատարածքային համալիրների բաղադրիչ:**

- 1) բույսերն ու կենդանիները
- 2) ազգերի էթնիկական կազմը
- 3) ջրագրական ռեժիմը
- 4) լեռնային ապարները

20

**Տրված երկրներից ո՞րը ունիտար չի:**

- 1) Թուրքիա
- 2) Ֆրանսիա
- 3) Հնդկաստան
- 4) Իրան

21

**Բնակչության ծնելիության կարգավորմանն ուղղված միջոցառումների՝ վարչական, տնտեսական, քարոզչական և այլն, համակարգը, որի միջոցով պետությունը ձգտում է կարգավորել ծնելիությունը նպատակահարմար ձևով, կոչվում է.**

- 1) ժողովրդագրական պայթյուն
- 2) ժողովրդագրական ճգնաժամ
- 3) ժողովրդագրական իրադրություն
- 4) ժողովրդագրական քաղաքականություն

22


Ըստ մարդաշատության, ո՞ր խմբի մեջ են մտնում 500 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքները:

- 1) փոքր
- 2) խոշոր
- 3) խոշորագույն
- 4) մեծ

23

Ո՞ր երկրի սեռատարիքային բուրգն է պատկերված նկար 1-ում:

- 1) Ճապոնիա
- 2) Հնդկաստան
- 3) Մեծ Բրիտանիա
- 4) Իտալիա




Նկար 1

24

Միջազգային տնտեսական հարաբերությունների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Առևտրային հաշվեկշիռը երկիր արտահանված և ներկրված ապրանքների և ծառայությունների արժեքային արտահայտության հարաբերությունն է:
- 2) Միջազգային զբոսաշրջությունն ու տեղեկատվության փոխանակումը ծառայությունների միջազգային առևտրի ձևերից են:
- 3) Ապրանքների արտահանման և ներմուծման չափերով առաջատար երկրներից են Չինաստանը, ԱՄՆ-ն, Գերմանիան:
- 4) Տնտեսական հարաբերությունների ամենահին և ամենատարածված ձևը միջազգային առևտուրն է:



Քարտեզ 1

25

Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Կարակաս մայրաքաղաքը:

- 1) Զ
- 2) Է
- 3) Լ
- 4) Ե

26

Քարտեզ 1-ի վրա ո՞ր ծովային հոսանքն է նշված Ս տառով:

- 1) Պերուական
- 2) Ֆոլկլենդյան
- 3) Բենգելյան
- 4) Կալիֆոռնիական

27

Տրված պետություններից ո՞րը ներկայումս չի գտնվում ԱՊՀ կազմում:

- 1) Վրաստան
- 2) Ղազախստան
- 3) Ուզբեկստան
- 4) Հայաստան

28

Տրվածներից ո՞րը բարձր զարգացած երկրների առաջին ենթատիպում գտնվող երկիր չէ:

- 1) Ֆրանսիան
- 2) Իսպանիան
- 3) Իտալիան
- 4) Գերմանիան

29

Քարտեզի վրա միատեսակ մթնոլորտային ճնշում ունեցող, փակ, կոր գծերը կոչվում են.

- 1) իզոբարեր
- 2) իզոհիետներ
- 3) իզոկոլներ
- 4) իզոթերմեր

30

Ըստ պետությունների կառավարման այս ձևի, իշխանությունը փոխանցվում է ժառանգաբար և պետությունը կառավարվում է միապետի թագավորի, կայսրի, սուլթանի և այլոց կողմից:

- 1) նախագահական հանրապետություն
- 2) համադաշնություն
- 3) խորհրդարանական հանրապետություն
- 4) բացարձակ միապետություն

31

Երկրագնդի վրա բնակչության անհավասարաչափ տեղաբաշխման վրա ազդող բնական գործոններից չէ.

- 1) ջրագրական ցանցը
- 2) հողակլիմայական պայմանները
- 3) արտադրության զարգացման մակարդակը
- 4) ռելիեֆը

32

Ինչպե՞ս են կոչվում որևէ երկրի 15-65 տարեկան բնակչությունը, որոնք իրենց ֆիզիկական զարգացմամբ, անհրաժեշտ գիտելիքներով, փորձով կարող են աշխատել տնտեսության որևէ ճյուղում:

- 1) բնակչության վերարտադրություն
- 2) բնակչության տարիքային կազմ
- 3) տնտեսապես ակտիվ բնակչություն
- 4) աշխատանքային ռեսուրսներ

33

Ընտրել ճիշտ պնդումը:

- 1) ԱՄՆ-ում ձևավորված խոշոր մեգալոպոլիսներն են Բոսվաշը, Չիկիթսը և Սան-Սանը:
- 2) Քաղաքային բնակչության բաժնի ավելացման, քաղաքների դերի բարձրացման և քաղաքային ապրելակերպի տարածման պատմական գործընթացը կոչվում է տարաբնակեցում:
- 3) Ջարգացած երկրներին բնորոշ է «կեղծ ուրբանացումը»:
- 4) Խոշոր քաղաքների արվարձանների սրբնթաց աճի երևույթն անվանում են սուպերուրբանացում:

34

Բնական ռեսուրսների վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Աշխարհում պղնձի տարածման խոշորագույն շրջաններից է Անդյան լեռնային համակարգը:
- 2) Աշխարհի բոլոր երկրներն ու տարածաշրջանները հավասարաչափ ապահովված են բնական ռեսուրսներով:
- 3) Հողը յուրահատուկ ռեսուրս է, որը շատ դանդաղ է վերականգնվում:
- 4) Վառելիքային օգտակար հանածոներն ունեն նստվածքային ծագում:

35

Ինքնաթիռը գտնվում է մի օդանավակայանում, որի աշխարհագրական կոորդինատներն են հյուսիսային լայնության  $45^\circ$  և արևմտյան երկայնության  $80^\circ$ : Որո՞նք կլինեն ինքնաթիռի կոորդինատները, եթե ինքնաթիռը 444 կմ գնա դեպի հյուսիս, 444 կմ դեպի արևելք, 444 կմ՝ հարավ և 444 կմ՝ արևմուտք:

- 1) հս. լ.  $45^\circ$  և արմ.ե.  $80^\circ$
- 2) հվ. լ.  $45^\circ$  և արլ.ե.  $80^\circ$
- 3) հս. լ.  $45^\circ$  և արլ.ե.  $80^\circ$
- 4) հվ. լ.  $45^\circ$  և արմ.ե.  $80^\circ$

36

Տրվածներից ո՞րը չի համարվում հակակարկտային միջոցառում ՀՀ-ում:

- 1) գազագեներատորային
- 2) ջրահեռացում
- 3) ինքնաթիռային
- 4) հակակարկտային ցանցեր

37

Տրվածներից ո՞րը քիմիական արդյունաբերության ենթաճյուղ չէ:

- 1) գունավոր մետալուրգիայի արտադրական թափոնների օգտագործման համալիր
- 2) բնական գազի հիմքի վրա կառուցված սինթետիկ կաուչուկի և այլ քիմիական միացությունների արտադրական համալիր
- 3) սարքաշինության, ավտոմատացման միջոցների ու կառավարման համակարգերի արտադրական համալիր
- 4) ազոտային պարարտանյութերի և ազոտական այլ միացությունների համալիր

38

Հայկական բարձրավանդակի (միջնաշխարհի) մաս չի համարվում:

- 1) Հայկական հրաբխային բարձրավանդակը
- 2) միջլեռնային գոգավորությունները
- 3) Հայկական կամ Արևելյան Տավրոսը
- 4) Ներքին Տավրոսի լեռնային համակարգը

39

Թվարկված բնական աղետներից ո՞րը բնորոշ չի ՀՀ-ին:

- 1) սողանքները
- 2) ցունամիները
- 3) երկրաշարժերը
- 4) սելավները

40


Հողաբարելավման ո՞ր տեսակին են պատկանում լանջերի հերկումը լայնակի ուղղությամբ, ճմապատումը և դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը:

- 1) քիմիական մելիորացում
- 2) արհեստական ոռոգում
- 3) ցամաքեցում
- 4) հակաերոզիոն միջոցառումներ

41

Քարտեզ 2-ում n ո՞ր տառով է նշված Ջավախքի լեռնաշղթան:

- 1) Բ
- 2) Գ
- 3) Դ
- 4) Ա



Քարտեզ 2

42

Քարտեզ 2-ում n ո՞ր տառով է նշված Վեդի գետը:

- 1) Զ
- 2) Է
- 3) Ը
- 4) Ե

43

Սպասարկման ոլորտի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ինչքան մեծ է պահանջարկի հաճախականությունը, այնքան ծառայություններ մատուցող հաստատությունները պետք է մոտիկ լինեն բնակչությանը:
- 2) Այն հաստատությունները, որոնք գտնվում են տարբեր տարածքներում և չունեն փոխադարձ կապեր, առաջացնում են սպասարկման տարածքային համակարգ:
- 3) Հասարակության զարգացմանը համընթաց՝ ոչ արտադրական (սպասարկման) ոլորտի դերը բարձրանում է:
- 4) Գոյություն ունեն ամենօրյա, դրվագային և պարբերական ծառայություններ:

44

Որոշակի իրավական ձևի շրջանակներում գործադիր իշխանության մարմինների նպատակաուղղված ներգործությունը կառավարվող սուբյեկտի վարքագծի վրա՝ շրջակա միջավայրի պահպանության եւ բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման նպատակով, կոչվում է.

- 1) կայուն արտադրություն և սպառում
- 2) բնապահպանական մոնիթորինգ
- 3) գործարար կենսունակություն
- 4) բնապահպանական կառավարում

45

Տրվածներից ո՞րը կայուն գյուղատնտեսության կառուցվածքային բաղադրիչ չէ:

- 1) գյուղատնտեսական թափոնների կառավարում
- 2) գյուղատնտեսական հողահանդակների քայքայումը
- 3) անվտանգ կերարտադրության կազմակերպումը
- 4) կենսատեխնոլոգիա և գենային ինժինեռիա

46

Ըստ կիրառվող մշակության տեխնոլոգիաների ինտենսիվության բնույթի գյուղատնտեսության ուղղություններից չէ.

- 1) պերմամշակություն
- 2) ինտենսիվ գյուղատնտեսություն
- 3) փայտամշակում
- 4) էքստենսիվ գյուղատնտեսություն

47

Աշխարհագրական թաղանթի կենդանի բնության բաղադրիչ է.

- 1) կենսոլորտը
- 2) մթնոլորտը
- 3) ջրոլորտը
- 4) քարոլորտը

48

Այս բույսերն իրենց մեջ պարունակվող տարբեր նյութերի՝ եթերայուղեր, ալկալոիդներ, վիտամիններ և այլն, միջոցով մարդու օրգանիզմի վրա ունենում են հակաբորբոքային, ցավազրկող, քնաբեր, հանգստացնող և այլ բնույթի բուժիչ ազդեցություն: Դրանք են.

- 1) դեղաբույսերը
- 2) տեխնիկական բույսերը
- 3) կերաբույսերը
- 4) պարենային բույսերը

49

Կենսաբազմազանության վերաբերյալ տրված պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Կենդանիներն ունեն ռեյեֆագոյացնող նշանակություն:
- 2) Նախնադարյան մարդու առաջին հիմնական զբաղմունքը գիտնականները համարում են ռոռզովի հողագործությունը:
- 3) Շատ երկրներում գյուղատնտեսական, կառուցապատման և այլ նպատակներով չորացնում են հսկայական տարածություններ զբաղեցնող ճահիճներ եւ ճահճակալած հողեր,որոնք շատ թռչունների բնադրման եւ ձմեռելու վայրեր են:
- 4) Հողագոյացման գործընթացը և հողի բերրիությունը հիմնականում պայմանավորված են կենդանիների (հատկապես՝ մրջյունների, որդերի, տերմիտների, տարբեր տեսակի բակտերիաների) գործունեությամբ:

50

Ինքնատիպ տարածաշրջանների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ինքնատիպ երկրներից են տնտեսական սրընթաց աճ արձանագրած «նոր արդյունաբերական» պետությունները:
- 2) Նոր արդյունաբերական երկրների զարգացման հիմքը կազմում են էքստենսիվ գյուղատնտեսությունը և արդյունահանող արդյունաբերությունը:
- 3) Տնտեսական սրընթաց աճ արձանագրած նոր արդյունաբերական երկրների ժամանակակից տնտեսության ձեւավորման մեջ ամբողջովին բացառվել է օտարերկրյա ներդրումների բաժինը:
- 4) Ինքնատիպ տարածաշրջանները ձևավորվում են բացառապես մեկ գործոնի ազդեցությամբ:

51

Ստորև թվարկվածներից ո՞րը չի համարվում մարդկության համամոլորակային հիմնախնդիր:

- 1) տարածքային և ազգային հակամարտությունների հիմնախնդիրը
- 2) մոլորակի հանքահումքային և բնական այլ ռեսուրսների սահմանափակվածության հետ կապված էներգետիկ և հումքային հիմնախնդիրը
- 3) հազարամյակի զարգացման նպատակները
- 4) զարգացող երկրներում բնակչության արագ աճի հետևանքով առաջացած ժողովրդագրական հիմնախնդիրը

52

Որքա՞ն է Երկրի միջին շառավիղը:

- 1) 6357 կմ
- 2) 6378 կմ
- 3) 6375 կմ
- 4) 6371 կմ

53

Հողմնահարման ինչպիսի տեսակ գոյություն չունի:

- 1) ֆիզիկական
- 2) կենսաբանական
- 3) աշխարհագրական
- 4) քիմիական

54

Փոքրաթեք լանջերի վրա հայչող գերխոնավ հողերի կամ գրունտների փոքր շերտերի համեմատաբար դանդաղ տեղաշարժը, որը կատարվում է ձգողական ուժերին գումարվող սառցածին երևույթների հետևանքով, կոչվում է.

- 1) սուբդուկցիա
- 2) կոնվեկցիա
- 3) սուլիֆյուկցիա
- 4) էրոզիա

55

Տրվածներից ո՞րը չէ համարվում գետերի ջրհավաք ավազանի մուտքի բաղադրիչ:

- 1) մթնոլորտային տեղումները
- 2) արտահոսքը ստորգետնա ուղիներով
- 3) մակերևութային հոսքերը
- 4) տրանսպիրացիան բույսերի միջոցով

56

Ընտրել Հայկական լեռնաշխարհի հրաբխային ծագում ունեցող լեռները:

- |                   |                    |
|-------------------|--------------------|
| 1) Սավալան        | 5) Հայկական Տավրոս |
| 2) Հայկական պար   | 6) Ծաղկունյաց      |
| 3) Փամբակ         | 7) Արագած          |
| 4) Արևելապոնտական | 8) Բյուրակն        |

57

Ընտրել այն բնակավայրերը, որոնք գտնվում են Տավուշի մարզում:

- |             |                |
|-------------|----------------|
| 1) Ճամբարակ | 5) Թումանյան   |
| 2) Իջևան    | 6) Նոյեմբերյան |
| 3) Ալավերդի | 7) Վանաձոր     |
| 4) Բերդ     | 8) Դիլիջան     |

58

Ընտրել ՀՀ այն մարզերը, որոնք սահման ունեն Ադրբեջանի հետ:

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Լոռի      | 5) Արմավիր   |
| 2) Արագածոտն | 6) Արարատ    |
| 3) Կոտայք    | 7) Շիրակ     |
| 4) Տավուշ    | 8) Վայոց ձոր |

59

Ընտրել այն երկրների համարները, որոնք ապահովված են նավթի պաշարներով:

- |                    |             |
|--------------------|-------------|
| 1) Իրան            | 5) Ճապոնիա  |
| 2) Գերմանիա        | 6) Իտալիա   |
| 3) ՌԴ              | 7) Հայաստան |
| 4) Սաուդյան Արաբիա | 8) Վանադա   |

60

Ընտրել այն երկրների համարները, որոնք համարվում են «նոր արդյունաբերական»:

- |              |                    |
|--------------|--------------------|
| 1) Սուդան    | 5) Հարավային Կորեա |
| 2) ՀԱՀ       | 6) ՌԴ              |
| 3) Նորվեգիա  | 7) Կանադա          |
| 4) Սինգապուր | 8) Մալայզիա        |

61

Ընտրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն դեպի Միջերկրական ծով:

- |                |             |
|----------------|-------------|
| 1) Իսպանիա     | 5) Ռումինիա |
| 2) Հունաստան   | 6) Եթովպիա  |
| 3) Մարոկկո     | 7) Հորդանան |
| 4) Պորտուգալիա | 8) Չադ      |

62

Հրագրան գետի վրա կառուցված ջրէկ-ները գրել հարավից հյուսիս հաջորդականությամբ:

- 1) Արգելի
- 2) Արգնու
- 3) Քանաքեռի

63

Գրել տրված պետություններն ըստ տարածքի մեծության նվազող հաջորդականությամբ:

- 1) Կանադա
- 2) Չինաստան
- 3) Ֆրանսիա

64

Գետի միջին լայնությունը 15մ է, միջին խորությունը 50 սմ, գետի ջրի արագությունը 50մ/վ: Հաշվել գետի ծախսը (մ<sup>3</sup>/վ):

65

Երկրում երկաթի հետախուզված պաշարները 250մլն.տ. են, իսկ տարեկան հանույթը 5 մլն.տ.: Քանի՞ տարի կբավարարի երկաթի պաշարները, եթե հանույթի տարեկան արդյունահանման ծավալները չփոխվեն:

66

Հաշվել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սետեմբերի 23-ին Երևանում:

67

Օդի բացարձակ խոնավությունը  $15\text{գ/մ}^3$  է, իսկ հագեցնելու համար անհրաժեշտ է 50 գ ջուր: Հաշվել հարաբերական խոնավությունը:

68

Ա քաղաքի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ.  $50^\circ$ , արլ.ե.  $15^\circ$ , իսկ Բ քաղաքի կոորդինատները՝ հս.լ.  $45^\circ$  և արմ.երկ  $30^\circ$ : Որքան կլինի նրանց միջև գոտիական ժամանակների տարբերությունը:

**Մարդ բնություն փոխհարաբերությունների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:**

- 1) Քիմիական աղտոտման դեպքում տեղի է ունենում միջավայրի քիմիական հատկանիշների փոփոխություն:
- 2) Քիմիական ու մետաղաձուլական արդյունաբերությունը, վառելիքաէներգետիկան, ավտոմոբիլային տրանսպորտը, շինարարությունը, կենցաղային թափոնները համարվում են կենսաբանական աղտոտման աղբյուրներ:
- 3) Էկոլոգիական ճգնաժամի դեպքում խախտվում են նյութերի բնական շրջապտույտը, համակարգի կապերը, միջավայրը սկսում է քայքայվել, նախկին բնական լանդշաֆտներն իրենց տեղը զիջում են ավելի ցածր արդյունավետություն ունեցող մարդածին լանդշաֆտներին:
- 4) Բնությունը մարդուն շրջապատող, նրա գոյությունն ապահովող բնական տարրերի երևույթների ամբողջությունն է:
- 5) Էկոհամակարգի գլխավոր հատկանիշներն են ինքնակարգավորումը և ինքնավերականգնումը:
- 6) Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ փոքրանում է մարդու ներգործությունը բնական միջավայրի վրա:

**ՀՀ-ի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք սխալ:**

- 1) Մոտ է գտնվում աշխարհի բարձր զարգացած երկրներին և հզոր տնտեսական կենտրոններին:
- 2) ՀՀ-ի ՏԱԴ-ը ժամանակի ընթացքում անփոփոխ է և նրա նպաստավոր հատկանիշերը մնայուն են:
- 3) Գտնվում է ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի տնտեսական ու քաղաքական շահերի բախման գոտում:
- 4) Տարածքի մեծությամբ ու բնակչության թվով փոքր երկիր է և զիջում է աշխարհի ավելի քան 130 պետությունների:
- 5) ՀՀ-ն գտնվում է կարևոր միջազգային տրանսպորտային ուղիների (Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային եւ Ռուսաստանը Մերձավոր Արևելքին կապող) խաչմերուկում:
- 6) ՀՀ-ն տնտեսության զարգացման մակարդակով հետինդուստրիալ երկիր է: